Երկրորդ ընթերցում
Լրամշակված նախագիծ
Կ-875-25.06.2024-ՏՀ-011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ *ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ* ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. 1985 թվականի դեկտեմբերի 6-ի Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգիրքը (այսուհետ՝ Օրենսգիրք) լրացնել հետևյալ բովանդակությամբ *169.34-րդ* հոդվածով.

«**Հոդված *169.34.* Հայաստանի Հանրապետության տարածքից օդային տրանսպորտով Եվրասիական տնտեսական միության անդամ պետություններ առանց համապատասխան թույլտվության ապրանքների արտահանումը**

1. Կառավարության կողմից սահմանված ցանկում ներառված ազգային անվտանգության տեսանկյունից զգայուն ապրանքների (որոնք որոշակի վերափոխման արդյունքում կարող են հանդիսանալ հսկվող ապրանքներ)՝ Հայաստանի Հանրապետության տարածքից օդային տրանսպորտով Եվրասիական տնտեսական միության անդամ պետություններ արտահանումը (այդ թվում՝ արտահանմանն ուղղված գործողությունների կատարումը)՝ առանց այդպիսի ապրանքների արտահանման համար օրենքով և դրանից բխող այլ իրավական ակտերով սահմանված ընթացակարգերով նախատեսված թույլտվությունների առաջացնում է՝

տուգանքի նշանակում՝ արտահանվող զգայուն ապրանքի արժեքի 50 տոկոսի չափով, բայց ոչ պակաս նվազագույն աշխատավարձի 500-ապատիկը՝ իրավախախտման արձանագրման պահին իրավախախտման գործիք կամ անմիջական օբյեկտ հանդիսացող առարկայի առկայության դեպքում դրանց բռնագրավմամբ:»:

Հոդված 2. Օրենսգրքի 234-րդ հոդվածում «տեղեկատվության մասով» բառերից հետո լրացնել «, *169.34-րդ* հոդվածով նախատեսված՝ *իրեն վերապահված*

իրավասությունների շրջանակում վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերը» բառերով:

Հոդված 3. Օրենսգրքի 244[2]-րդ *հոդվածի 1-ին մասում «169.27-րդ հոդվածներով» բառերը փոխարինել «169.27-րդ, 169.34-րդ հոդվածներով» բառերով*:

***Հոդված 4**. Օրենսգրքի 310-րդ հոդվածի 3-րդ մասի՝*

1) 5-րդ պարբերությունում «օրենքով» բառից հետո լրացնել «, ինչպես նաև սույն օրենսգրքի 169.34-րդ հոդվածով» բառերը,

2) 9-րդ պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«հարկային մարմնի՝ դրա համար լիազորված անձինք՝ սույն օրենսգրքի 169.34-րդ հոդվածով նախատեսված իրավախախտումների կատարման դեպքում.»:

Հոդված 5. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Տեղեկանք փոփոխվող հոդվածների մասին

~~Առաջին~~ Երկրորդ ընթերցում

Կ-875-25.06.2024-ՏՀ-011/1
Լրամշակված նախագիծ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ~~ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ~~ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. 1985 թվականի դեկտեմբերի 6-ի Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգիրքը (այսուհետ՝ Օրենսգիրք) լրացնել հետևյալ բովանդակությամբ ~~169.33-րդ~~ 169.34-րդ հոդվածով.

«**Հոդված ~~169.33~~169.34. Հայաստանի Հանրապետության տարածքից օդային տրանսպորտով Եվրասիական տնտեսական միության անդամ պետություններ առանց համապատասխան թույլտվության ապրանքների արտահանումը**

1. Կառավարության կողմից սահմանված ցանկում ներառված ազգային անվտանգության տեսանկյունից զգայուն ապրանքների (որոնք որոշակի վերափոխման արդյունքում կարող են հանդիսանալ հսկվող ապրանքներ)՝ Հայաստանի Հանրապետության տարածքից օդային տրանսպորտով Եվրասիական տնտեսական միության անդամ պետություններ արտահանումը (այդ թվում՝ արտահանմանն ուղղված գործողությունների կատարումը)՝ առանց այդպիսի ապրանքների արտահանման համար օրենքով և դրանից բխող այլ իրավական ակտերով սահմանված ընթացակարգերով նախատեսված թույլտվությունների առաջացնում է՝

տուգանքի նշանակում՝արտահանվող զգայուն ապրանքի արժեքի 50 տոկոսի չափով, բայց ոչ պակաս նվազագույն աշխատավարձի 500-ապատիկը՝ իրավախախտման

արձանագրման պահին իրավախախտման գործիք կամ անմիջական օբյեկտ հանդիսացող առարկայի առկայության դեպքում դրանց բռնագրավմամբ:»:

Հոդված 2. Օրենսգրքի 234-րդ հոդվածում «տեղեկատվության մասով» բառերից հետո լրացնել «, ~~169.33-րդ~~ 169.34-րդ հոդվածով նախատեսված՝ իրեն վերապահված իրավասությունների շրջանակում վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերը» բառերով:

Հոդված 3. Օրենսգրքի 244[2] -րդ ~~հոդվածում «169[15]-» թիվը փոխարինել «169[15]-, 169.33» թվերով~~ հոդվածի 1-ին մասում «169.27-րդ հոդվածներով» բառերը փոխարինել «169.27-րդ, 169.34-րդ հոդվածներով» բառերով:

Հոդված 4. Օրենսգրքի 310-րդ հոդվածի 3-րդ մասի՝

1) 5-րդ պարբերությունում «օրենքով» բառից հետո լրացնել «, ինչպես նաև սույն օրենսգրքի 169.34-րդ հոդվածով» բառերը,

2) 9-րդ պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«հարկային մարմնի՝ դրա համար լիազորված անձինք՝ սույն օրենսգրքի 169.34-րդ հոդվածով նախատեսված իրավախախտումների կատարման դեպքում.»:

Հոդված 45. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Ա Մ Փ Ո Փ Ա Թ Ե Ր Թ

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՒՄ ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑՄԱՄԲ ԸՆԴՈՒՆՎԱԾ «ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (Կ-875-25.06.2024-ՏՀ-011/0) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

№	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկություն ներն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
1	**2**	**3**	**4**	**5**	**6**
1.	ՀՀ կառավարություն	**Հոդված 1**	Հաշվի առնելով, որ Ազգային ժողովի կողմից 2024 թվականի սեպտեմբերի 11-ին երկրորդ ընթերցմամբ և ամբողջությամբ ընդունվել է «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացում եւ փոփոխություններ կատարելու մասին» օրենքով (Կ-811-01.04.2024-ՏՀ-011/2) օրենսգրքում լրացվել է նոր «169.33» համարով հոդված, առաջարկվում է նախագծով լրացվող հոդվածի համարը փոխարինել նոր համարով:	Ընդունվել է: Նախագծի 1-ին հոդվածով Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացվող նոր հոդվածի համարը փոխարինվել է «169.34» համարով:	Ընդունվել է:
2.	ՀՀ կառավարություն	**Հոդված 2, Հոդված 3**	Քանի որ Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացվող նոր հոդվածով նախատեսվող իրավախախտման վերաբերյալ գործերի քննության ենթակայությունը միաժամանակ վերապահվում է և հարկային մարմնին, և մաքսային մարմնին, առաջարկվում է հստակեցնել վարչական	Ընդունվել է: Նախագծի 2-րդ և 3-րդ հոդվածներում կատարվել են համապատասխան փոփոխություններ՝ սահմանելով, որ վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերը հարկային կամ մաքսային	Ընդունվել է:

			իրավախախտումների վերաբերյալ գործերը՝ ըստ ենթակայության քննելու հարցը:	մարմինները քննում են իրենց վերապահված լիազորությունների շրջանակներում:	
3.	ՀՀ կառավարություն	**Հոդված 4**	Հաշվի առնելով այն, որ Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 310-րդ հոդվածը վերաբերում է բռնագրավման մասին որոշման կատարումն իրականացնող մարմիններին և այդ հոդվածի 3-րդ մասի 5-րդ պարբերությամբ սահմանված է, որ մաքսային մարմնի կողմից վարչական իրավախախտում կատարելու գործիք կամ անմիջական օբյեկտ հանդիսացող առարկան ենթակա է առգրավման «Մաքսային կարգավորման մասին» օրենքով նախատեսված իրավախախտումների կատարման դեպքում, ուստի առաջարկվում է նշված պարբերությունում կատարել լրացում՝ սահմանելով, որ օրենսգրքի 169.34-րդ հոդվածով նախատեսված դեպքում ևս մաքսային մարմինը իրավասու կլինի իրականացնելու առգրավում: Նույն հոդվածի 3-րդ մասի 9-րդ պարբերությունը վերաբերում է հարկային պետական տեսչության մարմինների՝ օրենսգրքի 169, 170, 171[1] հոդվածներով նախատեսված իրավախախտումների կատարման դեպքում առգրավման իրականացմանը: Նշված պարբերությունում առաջարկվում է սահմանել, որ օրենսգրքի	Ընդունվել է: Նախագիծը լրացվել է նոր՝ 4-րդ հոդվածով սահմանելով համապատասխան լիազորող նորմեր հարկային և մաքսային մարմինների կողմից իրավախախտման արձանագրման պահին իրավախախտման գործիք կամ անմիջական օբյեկտ հանդիսացող առարկայի առկայության դեպքում դրանց բռնագրավման համար: Միաժամանակ, լրամշակված նախագծում նոր հոդվածի լրացման հետ կապված փոխվել է նախագծի ուժի մեջ մտնելու հոդվածի համարակալումը, ինչպես նաև նախագծի վերնագրում «փոփոխություն» բառը փոխարինվել է «փոփոխություններ» բառով:	Ընդունվել է:

			169.34-րդ հոդվածով նախատեսված դեպքում հարկային մարմինը իրավասու կլինի իրականացնելու առգրավում: Միաժամանակ, հաշվի առնելով գործող կարգավորումները՝ 1) նշված պարբերությունում առաջարկվում է «հարկային պետական տեսչության մարմիններ» բառերը փոխարինել «հարկային մարմիններ» բառերով, 2) « 169, 170, 171[1] » հոդվածներին հղումները հանել, քանի որ՝ օրենսգրքի 169-րդ հոդվածով հարկային մարմնին վերապահված չէ բռնագրավում կատարելու լիազորություն, իսկ օրենսգրքի 170, 171[1] -րդ հոդվածներ օրենսգրքում առկա չեն:		